Իսկ այժմ տեսնում էի ընկերներիս նոյն հասակում, որոնք ցոյց էին տալիս խեղդոող մարդիկներին եւ ասում էին ինձ՝ «տե՛ս, Ֆարհատ, ինչպէ՞ս տարուում են այդ անբախտները հոսանքի հետ, գնանք, ազատենք նրանց»:

Երբ աչքս կրկին դարձրի դէպի գետը, ալիքների մէջ տեսայ մի քանի ինձ ծանօթ երեսներ — Մարիամին, Մագթաղին, իմ հօրը, իմ մօրը, — իմ աչքերի առջեւ մթնեցաւ, վազեցի դէպի ափը, որ օգնութիւն հասցնեմ: Յանկարծ գետի խարխուլ եզրը փուլ եկաւ, ես գլորոեցայ ցած...: Ինչպէս մի թեթեւ փետուր ես տարուում էի պղտոր հոսանքի հետ... կատաղի ալիքները շատ անգամ խորասոյզ էին անում ինձ դէպի յատակը, շատ անգամ դուրս հանում. կրկին տեսնում էի սիրելի պատկերները սարսափած եւ գունաթափ երեսներով...: Աշխատում էի ափին մօտենալ, հնարք չէր լինում, իմ թեւքերի ուժը հետզհետէ թուլանում էր, եւ ես խեղդոելու մօտ էի... Ես կանչում էի Կարոյին, Ասլանին եւ Սագօյին, որ նրանք ազատեն ինձ. բայց երբ աչքս դարձրի դէպի հոսանքի ընթացքը, տեսայ, նրանք էլ տարուբերուում են ալիքների մէջ...:

Յանկարծ յայտնոեցան երկու կերպարանքներ, որոնք ձեռքները մեկնած, աշխատում էին ազատել ինձ, նրանցից մէկը տխուր էր դէմքով եւ աչքերումը արտասուք կար, միւսը ուրախ եւ պայծառ էր երեսով եւ հրեղէն աչքեր ունէր: Ինձ երեւաց, թէ նրանք երկու հրեշտակներ էին, որոնք իջան երկնքից. իսկ յետոյ ճանաչեցի՝ մէկը Սոնան էր, միւսը՝ Մարօն, յետո՛յ, երբ ես թաղոեցայ ջրի տակ եւ միւս անգամ դուրս չեկա...:

Երբ ես զարթեցայ, Կարօն կանգնած էր իմ մօտ:

— Դու հիւանդ ես, Ֆարհատ, — ասաց նա խռոված կերպով: — Քո երեսը մեռելի գոյն է ստացել, դու այնպէս սարսափելի բաներ էիր խօսում քնիդ մէջ...:

Ես պատասխանեցի, թէ քունս անհանգիստ էր, եւ ես ոչ բոլորովին առողջ եմ զգում ինձ. գլուխս սաստիկ ցաւում է, անդամներս ջարդուում են, որպէս թէ ամբողջ մարմինս սանդի մէջ ծեծած լինէին:

Կարօն յայտնեց ինձ, թէ իրանք պէտք է գնան Բարդուղիմէոս առաքելոյ վանքը «մի գործի» համար եւ կը վերադառնան միւս օրը երեկոյեան, եւ խորհուրդ տոեց ինձ մնալ ծերունի որսորդի տանը, աւելացնելով, թէ գիշերը տաղաւարից դուրս բացօթեայ քնելով, մրսած կը լինեմ, պատոիրեց տաք բան խմել եւ քրտնել, որով շուտով կ'անցնէր տկարութիւնը:

Երբ նրանք նստեցին ձիաները, կամենում էին հեռանալ, Սագօն մօտեցաւ ինձ եւ խուլ ձայնով ասաց.